Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հոկտեմբերի 29-ի N 1256 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

«ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԵՎ (ԿԱՄ) ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով տեղափոխված և (կամ) մաքսային պահեստներում տեղակայված ապրանքների (այսուհետ՝ մաքսային պահեստում պահպանվող ապրանքներ) շարժի հաշվառման և մաքսային մարմիններ այդ շարժի վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու հետ կապված հարաբերությունները: Սույն կարգում օգտագործվող հասկացություններն օգտագործվում են «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում սահմանված իմաստներով:

2. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպումից անմիջապես հետո՝ ապրանքները բաց թողնող մաքսային տեսուչն ապրանքները տեղափոխող անձի և մաքսային պահեստի կազմակերպչի (այսուհետ՝ կազմակերպիչ) համապատասխան աշխատողի հետ միասին ապրանքներն ուղեկցում է կազմակերպչի համապատասխան տարածք (շինություն): «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ապրանքները բաց թողնելու մասին կազմակերպիչն անմիջապես համապատասխան նշումներ է կատարում գրանցամատյանում, իսկ մաքսային տեսուչը՝ հայտարարագրում, ինչպես նաև գրանցամատյանի համապատասխան սյունակում՝ դնելով իր անձնական կնիքը:

3. Կազմակերպիչը վարում է մաքսային պահեստում պահպանվող ապրանքների հաշվառման գրանցամատյաններ (այսուհետ՝ գրանցամատյան)՝ համաձայն ձևի, որի բոլոր

էջերը համարակալվում, կարվում և կազմվում են, որից հետո գրանցամատյանը ներկայացվում է կազմակերպության գրանցման վայրի մաքսատուն՝ կնքման և համարակալման: Կնքված և համարակալված գրանցամատյանը խիստ հաշվառման փաստաթուղթ է և հերթական համարներով հաշվառվում է մաքսատներում: Մաքսային պահեստի յուրաքանչյուր հասցեի համար վարվում է առանձին գրանցամատյան: Գրանցամատյանի կազմի վրա նշվում են գրանցամատյանի հերթական համարը, կազմակերպության լրիվ անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը:

4. Լրացված և ավարտված գրանցամատյանը պահպանվում է կազմակերպչի մոտ՝ մինչև գրանցամատյանում կատարված վերջին նշումը կատարվելու օրվանից սկսած երեք տարին լրանալը և ներկայացվում է վերադաս մաքսային մարմին՝ վերջինիս պահանջով: Գրանցամատյանը լրանալուց և ավարտվելուց հետո կազմակերպիչը, սույն կարգին համապատասխան, մաքսատուն է ներկայացնում է նոր գրանցամատյան՝ կնքման և համարակալման նպատակով:

5. Մաքսային պահեստում կարող են պահպանվել «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով բաց թողնված ապրանքները, ինչպես նաև «Արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպված Եվրասիական տնտեսական միության ապրանքները՝ 6 ամիս ժամկետով: Ապրանքները կարող են պահպանվել միայն այն կազմակերպչի մաքսային պահեստում, որի մասին համապատասխան նշումներ կան ապրանքները տեղափոխող անձի կողմից մաքսային մարմիններ ներկայացված հայտարարագրերի համապատասխան սյունակներում:

6. Մաքսային պահեստում պահպանվող ապրանքների նկատմամբ օրենքով սահմանված, դրանց պահպանվածությունն ապահովելու համար անհրաժեշտ ընթացիկ գործողություններից բացի, ցանկացած գործողություն, այդ թվում՝ ապրանքները տեղափոխող

անձին հանձնելը, կարող է կատարվել միայն վերադաս մաքսային մարմնի գրավոր թույլտվությամբ:

7. «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքներն այլ մաքսային ընթացակարգով ձևակերպելու դեպքում՝ մաքսային ձևակերպումների ավարտից անմիջապես հետո ապրանքներն ըստ համապատասխան մաքսային ընթացակարգի բաց են թողնվում մաքսային տեսուչի կողմից: Ապրանքները բաց թողնելուց անմիջապես հետո կազմակերպիչը համապատասխան նշումներ է կատարում գրանցամատյանում, իսկ մաքսային տեսուչը՝ հայտարարագրում, ինչպես նաև գրանցամատյանի համապատասխան սյունակում՝ դնելով իր անձնական կնիքը, որից հետո ապրանքը տեղափոխող անձի և կազմակերպչի համապատասխան աշխատողի ներկայությամբ ապրանքները դուրս են բերվում այդ ապրանքների պահպանման համար նախատեսված տարածքից (շինությունից):

8. «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ռեեստրում հաշվառման օրվանից սկսած կազմակերպիչը պարտավոր է վարել մաքսային պահեստում պահպանվող ապրանքների հաշվառումը և վերադաս մաքսային մարմնի կողմից հաստատված ձևով ապրանքների հաշվառման վերաբերյալ հաշվետվողականությունը (այսուհետ՝ հաշվետվություններ) յուրաքանչյուր ամիս մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներառյալ (բացառությամբ սույն կարգի 9–րդ կետով նախատեսված դեպքի) ներկայացնել վերադաս մաքսային մարմին:

9. Այն ապրանքների համար, որոնց պահպանության ժամկետը լրանում է, հաշվետվությունը ներկայացվում է ոչ ուշ, քան այդ ապրանքների պահպանության ժամկետը լրանալուն նախորդող 60-րդ օրը ներառյալ, իսկ կազմակերպչի ռեեստրից կազմակերպչին հանելու դեպքում չավարտված ամսվա համար հաշվետվությունը ներկայացվում է մինչև կազմակերպչի ռեեստրից կազմակերպչին հանելու մասին որոշումն ընդունելու օրվան հաջորդող հինգերորդ օրը ներառյալ:

10. Հաշվետվությունը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով (Microsoft Excel ֆորմատով)՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ թղթային եղանակով (պարտադիր կցելով նաև հաշվետվության էլեկտրոնային ֆայլը)՝ կազմակերպության տնօրենի կամ նրա լիազորած անձի ստորագրությամբ:

11. Հաշվետվության լրացման համար անհրաժեշտ փաստաթղթերում նշված արտարժույթի վերահաշվարկի նպատակով կիրառվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից «Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով մաքսային հայտարարագրի գրանցման օրվա դրությամբ հրապարակված՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

12. Ներկայացված հաշվետվության մեջ սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կազմակերպիչը կարող է ներկայացնել ճշգրտված հաշվետվություն: Ներկայացված հաշվետվության մեջ վերադաս մաքսային մարմնի կողմից սխալների հայտնաբերման դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադաս մաքսային մարմինը դրա մասին պատշաճ ձևով ծանուցում է կազմակերպչին, և կազմակերպիչը ծանուցումն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադաս մաքսային մարմին է ներկայացնում ճշգրտված հաշվետվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Զև

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

ՄԱՔՍԱՅԻՆ ՊԱՀԵՍՏՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

NN ը/կ	Ապրանքը տեղափոխող անձը	Ապրանքի անվանումը	Տեղերի քանակը	Չափի միավորը	Քանակը	«Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով բացթողման և ապրանքը մաքսային պահեստ տեղափոխելու ամսաթիվը և ժամը	«Մաքսային պահեստ» մաքսային ընթացակարգով հայտարարագրված օրերի թիվը	Մաքսային տեսուչի նշումը, այդ թվում՝ հայտարարագրի համարը	Մաքսային ընթացակարգի փոփոխության և մաքսային պահեստից ապրանքների դուրսբերման ամսաթիվը և ժամը	Բաց թողնված ապրանքի քանակը	Մաքսային տեսուչի նշումը պահեստից ապրանքների ելքի մասին, այդ թվում՝ հայտարարագրի համարը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12